նախ զղջալ 'ի մեղաց , վճարել զպարտս իւրեանց , հատուցանել այնոցիկ զորս եթէ զրկեալ էիցեն , ներել թշնամեաց , հայցել խոնարհու̄բ զթողու̄թի , և հաշտիլ ը̄. խռովեցելոյն , 'ի բաց թողուլ զսնափառու̄թին , և գրկել զս̄բ խոնարհու̄թին :

Եւ նախքան զելանելն 'ի տանէն կրկնեալ ծունր 'ի վ̄ր երկրի ուխտաւորն ջերմեռանդ , վերացուսցէ զմիտս իւր և զաչս 'ի երկինս , կնքեսցէ զինքն նշանաւ ս̄բ խաչին , և ասասցէ ըղձիւ մեծաւ և ուղիղ դիտաւորու̄բ զաղօթս նախապատրաստականս :

ՏԷ̄Ր , տուր ինձ շնորհս քոյս , զի ա̄մ ջանք , գործողու̄թիք և աշխատանքիմ , լինիցին պարզապէս ուղղեցեալք 'ի պատիւ և 'ի փառս քոյս մեծագոյնս ամէն :

Եւ ապա յանձնարասցէ տ̄ն այսու աղօթիւք զճանապարհ իւր :

Ա̄Ծ , որ զորդիսն 'ի սրայէլի ցամաք ոտիւք գնացուցեր ընդ մէջ ծովուն ; և զերիս մոգսն առաջնորդու̄բ աստեղն առ քեզ ժամանեցուցեր ; տուր

մեզ